

ՅԱԻԷԼՈՒԱՄ ԱՐԱՐԱՏԻ 1897 Թ. ԱՊՐԻԼ

ՊԱՏԱՄԱԿԱՆ ԱՂԵՏԻՅՈՒՆ

ԳՐԻԳՈՐԻ ԽՆԴԵՑԻՈՅ

Պատմական վիպասանութիւն:

Ն Ա Մ Ա Բ Ա Ն .

Գրիգոր Խնդեցին՝ «որչի ծերին» կամ ծերենց մահանունով, ծագելէ է ԹԴ-րդ դարու վերջերին և Թե-րզի առաջին քառորդում՝ իւր մայրենի Խնդե ծննդավայրից ստացած լինելով Խնդեցի կոչումը: Մենայ և վարժեալ ի գործ քահանայութեան առ սուրբ ձգնաւորի միոյ Վարդան կոչեցեալ, առում է Խնդեցու վարժապետներից մէկը՝ Վհոստայի ուխտն ս. Ստեփաննոս Յիպնավանք կոչեցեալ և վեցամ սպասաւորեալ նմա՝—գնաց այնուհետեւ Գրիգոր կատարելագործելու իւր ուսումը Սիւնեաց Երնջակ գաւառի Ապրահունեաց վանքը «մեծ վարժապետ» Եոհան Որոտնեցու մօտ՝ ուսումնակից ունենալով իրեն հոմանուն՝ յետոյ մեծահասակ ճաթեացուն, և մնաց այնտեղ ութ տարի. իսկ Ե. Որոտնեցու մահից (1386 թ.) նա դարձաւ իւր բնիկ գաւառը՝ Վիւր հոգեոր հարազատ և համշիրակ՝ զիտնական Սարգիս վարդապետի մօտ՝ Բաջրերունեաց Արձէշ քաղաքի Սուխարայ վանքը և տասն տարի բազում աշխատութեամբ գեղերեալ, ստացաւ նորանից աստիճան վարդապետութեան: Խնդեցու կեանքից յիշում է այնուհետեւ որ նա ճանապարհորդել է վարդապետների և աշակերտների ուղեկցութեամբ գէպի Սուրբ քաղաքը (Երուսաղէմ), ուր կացել է երկու տարի: Հաւանական է որ այդ միջոցներին լինի վախճանած Սարգիս վարդապետը (1401—1402 թ.) որին ինչպէս յայտնի է, յաջորդում է Սուխարայ վանքում նորա աշակերտ և Խնդեցու ընկերակից Վարդան վարդապետը՝ Հոգեոց վանքի ուխտից. իսկ սորա մահից յետոյ, որ հանդիպեց Տոսպայ Սաղնապատ վանքում, ուր հեռացած էր սա բարբարոս այլազգիների երեսից, —նոյն Սուխարայ ուխ-

տի առաջնորդութիւնը վարեց կարճ ժամանակ Խնդեցին Սակայն իւր նախորդի պէս նեղուելով այլազգիների արշաւանքներից և ստիպուած լինելով թողնել Սուխարայ ուխտը, նա հեռացաւ իւր առաջին ուսումնականին՝ այն է, Բզնունեաց Արձէշ քաղաքի Գաստակ կամ Յիպնայ անապատի Ստեփաննոս Սախավայի վանքը: Այստեղ անցրեց Գրիգոր իւր կեանքի մնացեալ օրերը՝ շարունակ նախորդած լինելով զրական զբաղմունքների և բարեգործութեան և մեռաւ մարտիրոսական մահով՝ նահատակուելով քրդերից 27-ին մայիսի 1425 թուին՝ 75 կամ 80 տարեկան հասակում:՝

Այս հաշուով Գր. Խնդեցին պէտք է ծնուած լինի մերձաւորապէս 1350 թուականին—իւր սկզբնական ուսումը և կրօնաւորական կոչումը ստացած Վարդան ձգնաւորի մօտ 6 տարի մնալուց յետոյ՝ մօտաւորապէս մինչև 1375 թ.—կատարելագործած իւր ուսումը Ե. Որոտնեցու մօտ՝ 8 տարուայ ընթացքում, որ ասել է՝ ոչ ուշ քան 1385 թ. (որովհետեւ յաջորդ թուին վախճանուեց «մեծ վարժապետը») —և վարդապետական աստիճան ստանալու համար գեղերած լինելով Սարգիս վարդապետի մօտ՝ 10 տարի, այսինքն ոչ ուշ քան 1400 թուականը (որովհետեւ այդ միջոցներին վախճանուեց Սարգիս վ.): Եթէ Խնդեցու Երուսաղէմ գնալն ևս գննեք նորա վարդապետական աստիճանն ստանալուց յետոյ՝ նախ քան վանահայրութիւնը, պէտք է որ այդ ուղեւորութիւնը եղած լինի 1400—1405 թուերի մէջ, որովհետեւ յաջորդ 1406-ին նա ստանձնեց Սուխարայ ուխտի և կարճ միջոցից Յիպնավանքի առաջնորդութիւնը:

Ժամանակակիցները—Թոմա Մեծորեցի, Առաքել Սիւնեցի և այլք—մեծ գովութեամբ են խօսում Խնդեցու մասին, «ոչ գովով՝ նը-

1. Տես Առաքել (ըստ երեսութիւն Միւնցի, աշակերտ Խնդեցու) վարդապետի ճառը—, նահատակութիւն Խնդեցու Գրիգոր Թեքնոց վարդապետի, ծնագրի Յայրմատուրքից քաղած, «Նոտաքը Հայոց հաւաց. Գեղարդի վ. Փիղղալմեան, Գ. Պոլիս, 1888, էջ 75—77: Եւս Առաքել Միւնցի իւր «Նորագործութիւն ի մահ նահատակութեան Թեքնոց Գրիգոր վարդապետի» շափարերականում կոչում է իւր ուսուցչին նաեւ Գրիգորիս Բզնունի: («Հայերգ», Ճէվանց, Թրֆիլս, 1885, էջ 175—180.)— Տես նաեւ Թոմա Մեծորեցի, Պատմ. Լամիթամուրայ, Փարձ, 1860, էջ 44, 47, 41—45, 85. — Չամչեան, Պատմ. Հայոց, Գ. 451—452:

ման նմա ոլորմամբ և մարդասեր և սպասաւոր աղքատաց և անանկաց».—կոչում են նորան «մեծ բարունապետ» որ ի վերջին աւուրքս քան զառաջինն գերադոյն երեւեցաւ. որ «խուռն և հինգ ամ զիրս զրեաց աիւ և զիշեր անհանդիստ արնուեթեամբ» որ «կրկին վկայասեր երեւեցաւ և զանցայտ պատմութիւննս սրբոց ի լոյս ածէր» որ «յոյժ ուսումնասեր գորով և մարտիրոսաց պատուող՝ մարտիրոսաց պատկացն եհասաւ և այլն:

Գր. Խլաթեցու անունով հասել են մեզ այլ և այլ գրուածքներ: 2 Աւելորդ չենք համարում առաջ բերել զոցա համառօտ ցուցակը՝ օգտուելով մեր ձեռքի տակ եղած աղբիւրներից: Հարկաւ ցանկալի էր ստուգել այս ցուցակը Խլաթեցու հնագոյն և ընտիր գրչագիրներէի հիմամբ և զորանով աւելի ճիշտ որոշել մեր հեղինակի գրականական գործունէութեան ծաւալը: որ պէտք է խոստովանել, սակաւ ծանօթ է և բնաւ չէ ուսումնասիրուած:

1. Նախ յիշելու է նորա Տաղերը, որոնց տուների կամ տողերի սկզբնատառերը սովորաբար հեղինակի անունն են կազմում: Իրնում ենք այստեղ մի քանի Տաղերի վերնագրերը՝ հետեւելով Հ. Տաշեանի «Յուցակին».—Գանգատ ունիմ, Յարութեան, Գովութիւն Սաղմօսի, Գիւտ գօտւոյն Աստուածածնի: Վենետիկեան ս. Ղազարի մի գրչագիր ամփոփում է իւր մէջ 23 աղերսական Տաղեր: Թէև ի նկատի ունենալու է միշտ, որ գրչագիրներում շփոթութեամբ են յաճախ համանուն հեղինակների մանաւանդ մանր գրուածքները՝ մէկի երկը միւսին վերագրելով:

2. «Ողբ մեռելի», որ մի քանի գրչագիր Դեորդ Երզնկացուն են վերագրում:

3. «Խրատական քաներս լաւ և ընտիր».—Աւրհնեալ է Հայրն Լուսոյ, Որ ստեղծ ըզմեզ ի հոգոյ, Ծնորհեաց մեզ միտք հանձարոյ, Աննել զկամս իւրոյ և այլն: տունք Ա—Բ:

4. Գանձեր, որոնց տողերի սկզբնատառերը նոյնպէս հեղինակի անունն են կազմում: Գնում ենք այստեղ մի քանի գանձե-

րի վերնագրերը՝ հետեւելով Հ. Տաշեանի «Յուցակին».—Թլխատութեան, Կիրակոսի, Վահանայ Գողթնեցոյ, Տեառն ընդառաջին Առաջաւորաց, Ատովմեանց, Թեոդորոսի, Բ. Կիր. Աղուհացից, Կիւրղի, Յովհ. Երուսաղէմացոյ, Ղազարու, Նոր Կիր., Ներսիսի Մեծի, Փոխման Աստուածածնի, Վարազայ Խաչի, ՀԲ. Առաքելոց, Յովակիմայ և Անայի, ս. Նիկողայոսի, Թագեոսի և Բարդուղիմէոսի, Դոնատիոսի Աստուածազգեցի, Որդւոց Որոտման, Սուքիսանց, Աւագ Բշ. և Գշ., Գ. Կիր. Աղուհացից, զխոտման Յովհաննու, Տապանակի, Գանձ Կիրակատի, Գիշերապաշտման:—Սոցա վերայ աւելացնելու է «Արարատի» 1895 թ. ապրիլ համարում Ս. Բարամեանցի հրատարակած 16 տող գանձը: Տես տպագիր Գանձարանը: Հմտ. նաև Ս. Կանայեանցի կազմած Յուցակ հայ. ձեռ. Ներսիս. հոգ. դպրանոցի (Թիֆլիս) 1893: էջ 11—16) հետաքրքրական Գանձարանը՝ 1505 թուին գրուած: Սակայն աւելի լիակատար է վերոյիշեալ Վենետիկեան գրչագիրը, որի մէջ կան պահուած Խլաթեցու 41 գանձերը:

5. Գանձ մեռնադրութեան (տպ. Դիրք Չեան. Կ. Պոլիս) 1752):

6. «Վասն Մովսիսի Կրոցն».—Մեկնութիւն Արարածոց—որ բաւական ընդարձակ ձև է՝ հետեւողութեամբ Բարսղի Վեցօրէից, Արիստոտելի, Ականց գրոց և Վարդանայ Մեկնութեան գրուած և հետաքրքրական լեզուի կողմից:

7. «Վասն Յետուայ» (հատուած):

8. «Խրատ ժամատեղաց ըստ արեւելեան սահմանաց և սխուածոց և ասութեան աղաւթիցն, զոր խնդրեալ ս. վարդապետն Յակոբ Արիմեցին ի մեծ բարունւոյն Կրիզորի Խլաթեցոյ»:

9. Ծառ ի ծնունդ ս. Աստուածածնի: 5

10. Ներքող տարեւորական տեղեաց:

11. Դատարտան կամ որշումն վան խնդրոյ իրիք պատկի՝ այն է թուղթն նորա

2. Հմտ. մտնաւանդ Հ. Յ. Տաշեանի «Յուցակ հայ ձեռ Մատ. Մեծի» ի Վիլննա, 1893—96, էջ 345 և ձեռնագր. էջ 1074:

5. Այս ծառի յաճախ Ներքողի որպէս և Խլաթեցու Տաղերն ու Գանձերն ամփոփող վերջ յեւած վենետիկեան լիակատար գրչագրի մասն հաղորդել է ինձ սիրոյցօտար Արթ. Գ. Յակոբոս Տաշեանը, որին յայտնում եմ այսու իմ շնորհակալութիւնս:

(Խլաթեցոյ) առ ոմն: (Չեռ. Յուշակ Վենեակ-
ս. Ղազարի գրչագր.):

12. Թուղթք խլաթեցոյ: (Անդ:)

13. Մանաւանդ արժանի է ուշադրու-
թեան խլաթեցու խմբագրած «Յայսմաուրքը»
փոքրը իւր ժամանակ նահատակուած վիաների
պատմութիւններով հանգերձ. «զգլիրս սրբոց
մարտիրոսաց և վիայիցն» տաււմ է Մեծոփե-
ցին մեր հեղինակին մասին» որ կոչի Յարմա-
ուուրց: շարագրեալ ի սրբոց հնոց և նորոց
փորձագետացն՝ ի լոյս էաճա: Այս նոյն երկն
է, որ ինչ ինչ յետամուտ յաւելուածներով
ապագրուեց երկու անգամ Կ. Պօլիս (1706 և
1730 թթ.) և մինչև այժմ ևս գործ է ած-
ուում շատ տեղ Հայ եկեղեցիներումս ուր
գեռ մուտ չէ գործել Պօլսի վերջին (1834)
աւելի հատարեալ հրատարակութիւնը՝ յայտ-
նի Տէր Խարայէի խմբագրած օրինակից:

14. խլաթեցու վերոյիշեալ երկասիրու-
թիւնների վերայ աւելցնելու է և՛ մինչև
այժմ մի քանի կարծ հատուածներով միայն
ծանօթ՝ ներկայ «Յիշատակարանն Աղեւից»,⁴
որ գուցէ Զամեանի (Գ. 451) յիշած Պատ-
մութիւն վկայից նահատակելոց ի ժամանակս
իւր» գրուածքը լինի: Մա 460 տողից բաղկա-
ցած մի չափաքան պատմութիւն է, որ մենք
Պատմական վիպասանութիւն անուանեցինք և
որը ամփոփում է իւր մէջ Լանկթամուրի և
այլ բռնակալների օրով՝ 1386—1422 թուե-
րին Հայաստան տեղի ունեցած զարհուրելի
կոտորածների և տառապանքների ախուր անց-
քերը՝ ժամանակակից երբեմն նաև ականա-
տես մատենագրի ճշմարտագատում և սրտա-
շարժ նկարագրութեամբ: Չը նայած իւր չա-
փարերական ձևին և բանաստեղծական պո-
րաքաներին՝ այս երկը պատմական մեծ ար-

ժէք ունի ի միջի այլոց և այն պատճառով
որ նա նոյն ժամանակի պատմագիր Թոմա
Մեծոփեցոյ աւելի վաղ է գրուած և տեղ
տեղ գեղեցիկ կերպով ստուգում ու լրացնում
է սորան:

Մեր վիպասանութիւնը պահպանուել է
Արգուն քաղաքի Լուսաւորչայ Հայոց եկեղե-
ցում զանուած բոլորագիր գրչագիր ձայնբաղ
Գանձարանի մէջ՝ յիշատակարանի վերջը, որից
իմացուում է, որ գրչագիրը գրուած է Վան քա-
ղաքում՝ Հայոց ՋԺԱ=1462 թուին—ուրեմն
խլաթեցու մահից 37 տարի յետոյ: Ես ընդօրի-
նակի եմ տուել այս գրուածքը յիշատակի ար-
ժանի հանգուցեալ Գրիգորիս Արքեպիսկոպոս
Աղուանեանցից 1886 թ. ինձ ուղարկած «Տո-
մար արձանագրութեան» մի տետրակից, որ
արտագրուած էր Կարսի առաջնորդարանի
քարտուղար պ. Ս. Դարբինեանի ձեռքով:⁵

Լոյս ընծայելով այս վիպասանական երկը՝
մենք ի նկատի ունինք ոչ այնչափ նորա բա-
նաստեղծական և գեղարուեստական կատարե-
լութիւնները, որովհետև նա արդարև միջակ
գրուածք է՝ միջակ ոճով յօրինուած:—որչափ
նորա պատմական բովանդակութիւնը և մա-
նաւանդ նորա ընդհանուր տրամագրութիւնը
և ողին» որ այնպէս ժամանակակից են և զու-
գաբէպ մեր ներկայ անմխիթար վիճակին...

«Յիշատակարանն Աղեւից» հրատարա-
կում ենք ամբողջութեամբ և անփոփոխ՝ բո-
լորովին համաձայն մեր գրչագիր օրինակին,
բնագրի միայն այլազգի բառերը նտորագրով
նշանակելով և նորա առղերի թիւը որոշելու
համար արարական թուանշաններ դնելով լու-
սանցքում: Բացատրութեան կարօտ մի քա-
նի կէտերի մասին աւելորդ չը համարեցինք
անհրաժեշտ ծանօթութիւններ տեղաւորել
բնագրի ներքև:

Գր. Խլաթեցու:

27 Փետրուարի 1897 թ.
Մոսկուս
Լազարեան ճեմարան:

⁵ Այդ տետրակը իւր ժամանակին ապստոփութեամբ
վերադարձրել եմ ես Գրիգորիս արքեպիսկոպոսին. իսկ իմ
սեպական ծնողքի աշխատութիւնը՝ «Ստորագրութիւն Կառ-
պէ 207 հայ գիտորէից և վարձակից 1878»- ուր ինք չան-
գուցեալ սրբազանը յանձնել էր ինձ տպագրելու ըստ իմ
հայտորութեան, լոյս ել տեսնի շուտով Բարձրագոյն
հաստատուած է մինչ և Ազգագրական ժողովածուի
մէջ:

⁴ Այս գրուածքի բոլորովին տարբեր է Գրիգորի
հաւանականօրէն խլաթեցու մի Տաղ. «Նկայք որդաս
քուք. ծորաք զգարութիւն-Ազգի նետողաց»... և այլն.
«Տմա Տուց ալ հայ. ծնագ. ներսիս. Հոգ. Դարանոցի»
էջ 409 որպէս և «Ժաքարդի» 1864 թ. օգոստ.—սեպտեմբ-
համարում Գրիգոր Երեցու նոյաւս «Յիշատակա-
րան» կոչուած «Տոնըս թուով հարիւր և քսան», բայց
աւելի ճիշտ 236 տող՝ աւելի կրօնական, քան պատմական
ոտանաւորը 1755 թ. գրուած, որ առել է՝ «Թէ ոչ մի կերպ
խլաթեցու գործը չէ կարող լինել: Մօր «Յիշատակարա-
նից» մի քանի հաստատ հատուածներ կան քերած միջա-
մէջ վճռը յիշած Դեմոն վ. Փորդալմանի, Նոտարք Հա-
յոց»՝ գրուածքում—էջ 56, 56 և 57՝ ընդամենը 55 տող և
է. Դեմոն Աւրանի «Արարատում»—էջ 525—526՝ ընդամե-
ղը 77 տող:

ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆ ԱՂԷՏԻՑ

Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵՐՈՒՄ,

ԶՈՐ ԱՍԱՅԵԱԼ Է

ԳՐԻԳՈՐԻ ԱՆՐԳԱՊԵՏԻ,

ՈՐ ՄԱԿԱՆՈՒՆ ԾԵՐԵՆՑ ԿՈՉԻ ԽԱԹԵՅԻ.

1 Ի յուժ հարիւր Հայոց թուական
 Ընդորս և հինգ եօթն յաւերան (1386թ.),
 Յունուարի մին պահք Յայանութեան
 Լոյս արեուն խաւարեցան

5 Մեծ վարդապետան անուն Յոհանն
 Որ և Կախիկ անուն ծննդեան
 Յետ վեց աւուրն խաւարման
 Փոխի առ Տէրն իւր անժամական:

10 Ի սոյն աւուրս դառնութեան
 Ըրագաղուցի աւր Յայանութեան
 Մեծ պատուհաս ի Շահաստան
 Բարբարոսաց ազգէն հասան:

15 Սր Եկն արար առ և թախտան
 Մինչև յերկիրն Հայաստան
 Հինգն Յունուարի թափուկ մշտան
 Ի քսան և ինն ի Նախըւան
 Անտի գնացին դէպի Մուղան

20 Դարձան յաշխարհն իւրեանց բնական
 Զառ և զաւար ընդ ինքեանս տարան
 Մըտին յաշխարհն Հնախան
 Անթիւ վնասչ գործեցան

25 Բազմաց արիւնք յերկիր հեզան
 Եւ շատք ի ձիւնն մրսեցան
 Բազումք յահէ նոցին փախեան

Եւ [ի] նըղմունս սատակեցան
 Մարք ըզտոյոց զուժ մոռացան
 50 Ծնաւդք մանկանց զահիճ եզան
 Շատք ի սրոյ նոցին մեռան
 Եւ այլ բազումք չարչարեցան
 Ընտ ընտ այս գործըս չարին
 Եւ ընք կորուստ Հայաստանին

55 Եհաս միւս այլ հարուած կրկին
 Եւ զառնապոյն քան զառաջին
 Մինչդեռ ի նոյն էաք սրզին
 Եկեալ եհաս մեզ ձայն զուժին
 Թէ շարժեցաւ առն Սորազմին

40 Առհասարակ ցեղ թաթարին
 Ժառանգաւորք Սըմբրղընդին
 Աւտար որդիքն Աբրահամին —
 Միահաղոյն յաշխարհս մըտին
 Յաթոռս Աարբապատականին

45 Ասին աւար և զերեցին
 Զազգս Պարսից և Հայ զարմին
 Տապալեցին յատակեցին
 Անխնայբար խոցոսեցին
 Զարըս սրոյ ճարակ առին

50 Եւ ըզկանայան զերեցին
 Զոմանց զուխսըն քերթէին
 Հանդերձ հերաւքն խըլէին
 Զայլոց զշունչն արդեւին
 Եւ հեղձամահըս խեղդէին

55 Որպէս զոչխարըս մորթէին
 Փակս ի թիկանցն հանէին
 Զկտըս հըրով խորովին
 Եւ ծենծերովքըն ցնծային
 Շատք զբրիտոսս ուրանային

60 Եւ ըզՄահմետ գաւանէին
 Եւ ընք դաւառ Այրարախին
 Մըտին յաշխարհն յԱղանին
 Զարքայանխառ քաղաքն առին
 Որում Տըփիխըն կոչէին

65 Զարքայն Բաղրաս ըզվրայցին
 Ի հաւատոցն ուրացուցին
 Անտի անդրէն դարձ արարին
 Եւ ի Մուղան ձմեռնեցին

7. Թողմա Մեծոփեցին (էջ 15) անորոշ է
 աւանդում խաւարման մասին. «Եւ ի սոյն աւուրս հանգեաւ
 ի Քրիստոս (Յոհան վ.) եւ խաւարուեմն նոյն աշխարհս
 հայոց»:

8. Զամշեան (թ. 450) Յոհան Կախիկի կամ Ո-
 ռոտնեցու մահը դնում է 1588 թ., Ալիշան («Միսական»,
 220, 1585 կամ 1586 թ. — «Անժամական» — այսպէս մեր
 օր. Փիթր ալէմեանի օր. «Նոտարք», էջ 56) ունի...
 առ տէրն իւր անժակական:

15. Թախտան Պարսկ. բառ = աւարառութիւն:

17-18. Ժամանակագրական այս ծըշտ որոշումները
 չէ յիշում Թ. Մեծ. (էջ 14):

25. Այս տողի մէջ թուում է թէ մի վանկ պակաս է.
 արդեօք սպասելու չէր — «Անթիւ վնաս էր «ր գործեցան»:

28. Մեր օրինակում «Եւ նըղմունս» որ մենք ուղ-
 ղեցինք «Եւ ի նըղմունս» համաձայն քերականութեան և
 վանկերի շափին: — 55. «Ընտ ընտ» — այսպէս մեր օր. ար-
 դեօք ընտո՞ւստ և կամ թերեւս եւ ընտ...:

Ապա յաւուրս զարնանային
 70 Դարձ ի Սիւնիս Մեծն արարին
 ԸզՈրտայն զգեական առին
 Մինչև ի Կարս արշաւեցին
 Զերկիրըս ամէն շաւլ արարին
 Ի յանցանելն երթեակէին
 75 Զի յետ դարձան և կրկնեցին
 Երրորդ անգամ չորրորդեցին
 Որոյ անուն գլխաւորին
 Էր Լանկ Թամուր չարեաց զընդին
 Այս էր ի թիւ ութ հարիւրին
 80 Եւ երեսուն և վեց ամին (1387 թ.)
 Զամուր տեղա՛ յաւար առին
 Եւ շատ ոճիրըս գործեցին
 Յորոց և մի էր և Բըջնին
 Որ էր աթոռ երկուց պետին
 85 Զոր առին և քանդեցին
 Զեպիսկոպոսն սպաննեցին
 Այլ և զչասանըն ծարեցին
 Երեք որդւովքըն սպաննեցին
 Զի ըզնոցին ամուրն առին
 90 Եւ չորս հարիւր անդէն սպանին
 Եւ յԵրևան մեծ աւանին
 Արս հինգհարիւր կոտորեցին
 Զունիմ ասել քան զոր կրեցին
 Բրիստոնէից աղբ չայ զարմին
 95 Դողան ոսկերքս և սաւառնին
 Լոյս իմ քաղի սիրտըս ճըմլին
 Բանգի աչաւք իմ տեսանին
 Ողորմագլին հարուած սոցին
 Իշխանք բազումք ի տանց ելին
 100 Եւ ի յընչից պարապեցին
 Յերկուրացըն զըրկեցին
 Եւ հետիտարս տանէին
 Տըղայքն ի մէջ ծանապարհին
 Յոչ ի կարել գնալ՝ մեռանին
 105 Եւ կրանաւորք վանկարմին
 Մողորկով՝ յարկ ոչ զըտին
 Որք ի կանայս ոչ նայէին՝

Հարկիւ ի մէջ նոցա մտին
 Կարաւտ հացի մերկ շրջէին
 110 Եւ բոկ ոտամբք հեռեւէին
 Պատիւ չը կայր պատուականին
 Եւ ոչ նըշան ունեւորին
 Զը կայր ոչ հաց հացարաշխին
 Եւ ոչ գինի գինարբունին
 115 Զը կայր ոչ ձի ձիաւորին
 Եւ ոչ տըրեխ հեռեւեկին
 Աւտարք յաւտարըս շրջէին
 Եւ կերակուրս մուրանային
 Տիկնայք որ ձօն տունս ունէին
 120 Եւ մետաքսուք պերճանային —
 Հացակարուտս երեւէին
 Ժածկոյթ անձանցըն խնդրէին
 Իշխանք որ պետք անուանէին
 Եւ արծաթով յըզփանային
 125 Աղքատացեալքք վինէին
 Եւ կերակրոց կարաւտէին
 Եւ որք բազմաց հացըս տային՝
 Մին պատառոյ ակն ունէին
 Թէպէտե յոյժ ամաչէին
 130 Այլ ի կարեացըն լրբէին
 Թէև մուրալ պատկառէին
 Այլ ի սովոյն յանդգնէին
 Ժիւրեալք ի ցաւս Խտանային
 Աւն անդր և աստ մեռանէին
 135 Մանկունքն ի մարտըն նայէին
 Միթէ կենաց հընարս առնէին
 Մարքն ի զթոյն խորովէին
 Արագ ըզկեանս վճարէին
 Հարքն ի գորով տղայոց լային
 140 Ազիրողորմն վայէին
 Ի տեսանելն զոր սընուցին
 Դառըն կարեաւքըն ցաւաղին
 Ի մեռանել մանկանց նոցին
 Ինքեանք հոգիքն քաղէին
 145 Կիսոց չը կայր ոք որ լային
 Ի՛ ոչ գերեզմանս ծանաչէին
 Եւ այսպիսի ողորմագլին
 Այս տեսողայն երեւէին
 Այս ոչ միայն քրիստոնէից
 150 Այլ ի ծածիկ աղբոց բնուին
 Զի հասարակ էր նեղութիւն
 Պարսից աղբին հայ և թուրքին

75. շաւլ = անապատ:
 86. Բըջոյ սպիսկոպոսը՝ ըստ Մեծոփեցոյ (էջ 19), էթ
 վանականը Չամչ. Գ. 422 ունի՝ Տէր վանակ:
 87. Հասասն իշխանին չէ յըշու՛մ Թ. Մեծոփեցին:
 91. «Երբեւան մեծ աւանն՝ եւ շկայ Մեծոփեցու
 մօտ»
 95. «Սաւառնին» — այսպէս մեր օր արդեօք՝ սար-
 սըռնին և կամ՝ սարսափին:

Եւ այս ամէն յայնկոյս զեախն,
 Որ յերասխայ անուն կոչի[ն].

155 Իսկ յանցանելն յայսկոյս զեախն,
 Եւ յարշաւելն ըզհեա Թուրքին
 Մինչև յԱմթայ ջուրն հասին,
 Բազում ոճիրքս գործեցին:
 Անտի դարձան ի հայք ելին

160 Եւ ի վերայ Վանայ եկին:
 Պատեցին պաշարեցին
 Զամուր դղեակն յաւար առին,
 ԶՀայ և զՏաճիկսն կապեցին
 Եւ ի քարանցքն հոսեցին.

165 Այնքան հարին սատակեցին,
 Մինչ մըսադէղ անդ արարին:
 Այլ և զամուրն Երնջակին
 Թողում ասել զանցս նորին,
 Որ ի յաւուրց Աւագ Զատկին

170 Մինչև ի տաւն Սըրբոյ խաշին
 Ծանր զաւրաւք պաշարեցին.
 Բայց վընասել ոչ կարացին:
 Ապա յետոյ դարձ արարին
 Յաշխարհն իւրեանց ուստի եկին:

175 Դարձեալ կրկին ի դուրս եկին
 Ի քառասուն է՛երկու ամին
 Ի Բաբելոն արշաւեցին
 Ի՛ ի Միջագետքս կոխեցին,
 ԶՈւրհա քաղաքըն պանծալին

180 Եւ ըզԱմիթ երեւելին
 ԶՄերտին ամուր և զՆրսերին —
 Զորս բնաջինջ գերեցուցին:
 Եւ զայլ բազում քաղաքանին
 Զորս քանդեցին, աւերեցին:

185 Անտի դարձան յաշխարհս վերին
 Մինչև յԱւնիկ արշաւեցին,
 Զոր և ջանիւ մեծաւ առին,
 Եւ զՄսրըն գերեցին:
 Անտի դարձեալ յետ գնացին

490 Եւ զաւրս Թողին յԵրնջակին.
 Տանուհինգ ամ խըսարեցին
 Զրերդն Երնջակ՝ ապա առին:
 ԶԹողում ասել զգործ անարին
 Զվասթարհանդէս Վրաց արքային:

195 Որ եկն արար վատ յաղթու թիւն
 Զզաւրան փախոյց ըզՉաղաթին,
 Որ պաշարեալ խըսարէին
 Զամուր դղեակն Երնջակին,
 Անտի եհան զՄանի որդին

206 ԶՍուրբան Տախիրն յԵրնջակին.
 Տարաւ առ իւր և զաւրացոյց
 Եւ ետ տանել Ահմատ Մանին:
 Եւ ի գնալ չար զաւակին՝
 Ապստամբեաց ընդդէմ խանին

205 Սուլթան Ահմատ Թաղաուրին,
 Որ էր որդի Մանոյխին.
 Ոչ աջողեալ այն անբախտին
 Սուլթան Տահիր որդոյ խանին,
 Զի հայրանենդ եղեալ չարին

210 Հետըն տարաւ ի Բաղդադին,
 Իսկ ի լըսել Լանկ Թամուրին,
 Զոր ինչ արար արքայն Վրացին,
 Ի բարկութիւն շարժեալ կրկին
 Հանդէս արար իւր հեծելին:

215 Այլ բազմութեամբ քան զառաջինն
 Ի դուրս եկեալ Թամուր բեկին
 Յամուրսն եմուտ Վրաց տանին.
 Արար զերի զամենեսին,
 Անտի գնաց մինչ ի Զըմիւռին

220 Բաղաք Լիկեայ ծովեղերին,
 Զչարսն կոխեալ զիլլրումին՝
 Զհաւար յաղթող մեծ սուրբանին

167—172. Երնջակի պաշարման ժամանակէն վերաբերեալ մանրամասնութիւնները պահատու՛մ են Թ. Մեծոփեցու մօտ (էջ 17). Իսկ Զամբեանի պատմածը (Գ. 421) հակասակ է յայնպէս հաղորդածին:

176. Այսինքն Հայոց 842. թուին = 1595 թ. Մեծոփեցին (էջ 44) 844 = 1595 թուականին է դնում Լանկ Թամուրի երկրորդ արշաւանքը:

181 Նրսերն = Մծրն:

184 Փերդալ է մ. օր. — Զորս քանդեցին եւ գերեցին:

191. Երնջակի պաշարոյն էր Լանկ Թամուրի որդի Միրան Շահ Զաղաթան (Թ. Մեծ. էջ 71). փոխանակ «տան ուհնգ ամ», որ չէ յիշում Մեծոփեցին, Ալիան («Սիսական», 564) անելի ուղիւ, ընդ երկար ամիսս՝ է դնում:— Խըսարեւ = պաշարել:

200. Երնջակի Թիւր կամ Դահէր եւ կամ Տահիւր (Տախիր եւ Տայիր) Սուլթանը Բաղդադու թաղուոր Ասիւտ կամ Անատ խանի որդին էր, իսկ Անատ — Աշեխուր Սուլթանի կամ Եէն Վէյիս խանի որդին: Զամբ. Գ. 557, ԱԼԻԶԱՆ, «Սիսական», Անդ:

201. «առ իւր» այն է՝ Ի Տփլիս:

206 Այսինքն յաւար Վէյիսին, որ վերոյիշեալ Եէն Վէյիս խանն է:

221. Նոյնն է, որին Թ. Մեծոփեցին (էջ 65) «Խոնդրնար Ուղորում» (կայծակ) է կոչում, այն է՝ Օսմանցոց Սուլթան Բայազիտը:

Ղարայթաթարս այլ ընդ նմին
 Դերի տարաւ զամենեսին:
 225 Որոց ոչ էր թիւ համարին
 Կոտորեցոց զորս գերեցին
 Ի աուն գամբաց Կապագովիին:
 Որ Մէջերկրեայ Հոռովք սսին:
 Ո՛հ զայն զազայն զոր արարին
 250 Արանց, կանանց և ընդ մանկոսին.
 Չարսն թողեալ մինչ կենդանին
 Հողով ջրովն հեղձուցին:
 Իսկ ըզմատաղ տղայ մանկաին
 Չայն կաշտախ ձիոցն արկին:
 255 Իսկ յիջանել Միր Թամուրին
 Ի շահաստան Դամասկոսին՝
 Ժով ու ցամաք սասանեցին
 Վասըն լրրոյ չար համբասին.
 Չորս սրոյ ճարակ տային:
 240 Եւ զորս բոցով հրոյ այրէին:
 Եւ ըզգլուխն զոր կրարէին,
 Չայնս մըններայս յարինէին:
 Եւ յայտարիս չար համբասին
 Աշխարհ ամեն սասանեցին:
 245 Չայս արարեալ Միր Թամուրին
 Դարձաւ յաթոռ Սըմբըրընդին.
 Եւ անդ եհասաւ ար վախճանին
 Սատակեցաւ յիւր աթոռին:
 Իսկ Միրան Ծայ որդի նորին
 250 Եկեալ ի թախթն Թարբիդին,
 Որոյ ընդգէմ կացեալ նորին
 Ղարա Ռուսոֆ քախաղուռին:
 Ըհար զգաւրսն Չաղաթին
 Եւ առ զգլուխ Միրան Ծային.
 255 Թաղաւորեաց ի նոյն թախթին
 Թարբիթ քաղաք շահաստանին:
 Արար բազում խաղաղութիւն
 Եւ յաջողումն մարդկային.
 Էրէմնութիւն և էմնութիւն:

260 Ամենեին անգողութիւն:
 Իսկ յաճախել մեղաց ախարն
 Մարդկան ազգիս քրիստոնէին,
 Եղև զնալ խան Ռուսոֆին
 ՅԱխըճըխէ քաղաք Վրացին:
 265 Արար զազայ և գերութիւն
 Անթիւ վնաս և չարութիւն:
 Այս էր ի թիւ ութ հարիւրին,
 Այլ և վաթսուն և հինգ ամին (1416 թ.)
 270 Իսկ զգերիսըն զոր առին
 Յաւտար երկիր վըտարեցին.
 Բաղդատ է՛ի Մըսըր հասուցին
 Ի ի Խորասան Պարսկաց տանին:
 Ոչ մին հազար կամ հինգ վեցին,
 Այլ քան ըզբիւրըն էր աւելին
 275 Նոյն սպաննելոցն էր բազմութիւն
 Եւ անհամար որ ոչ թըւին:
 Իսկ ի յամի ութ հարիւրին
 Ի՛ եւ թանասուն թըւականին (1421)
 Ղարայ Ռուսոֆ աէրըն թախթին
 280 Սատակեցաւ ըստ արժանին,
 Խաղք, խայտառակ որդէս տեսին,
 Անկեալ յերկիր մարմին պղծին,
 Չի շիտթեցաւ զաւրքն չարին
 Եւ յիրերաց փախուստ առին:
 285 Ռուեալ նեխաւ գէշ զարշեկին
 Ազոաւք հանին զաչեր նորին:
 Իսկ յետ երկից աւուրց եկին,
 Բարձին զգէշն և թաղեցին:
 Իսկ զաւրք չարին Միր Ռուսոֆին.
 290 Ընդ որ զնացին՝ աւերեցին:
 Չար, անզգամ մարդիկ էին,
 Եւ անասախ ազգ Թուրքմանին.
 Ընդ մեռանել Ռուսոֆ բէկին
 Չաւրք Չաղաթին եկին հասին.
 295 Որոց զըլուխ և առաջին
 Էր Ծախ Ռուհ անուն նորին
 Էր նա որդի Միր Թամուրին
 Կըրսեր եղբայր Միրան Ծային.
 Չաւրքն բազում քան զԹամուրին:

242. Մըն երայս՝ որ է մինարայս = աշտարակ:
 252. Ղարա Ռուսոֆ որ եւ Միր Ռուսոֆ եւ Ռուսոֆ է՛ի՝
 Սասանոյ իշխնեցող Մարաց ամիրան էր, որին Թ. Մնձոփե-
 ցին լոկ Յուսուֆ է անուանուի: Բախաղուռն կամ Բա-
 հաղուր թաթար. բառ է եւ Նշանակում է քաջ կամ
 դիւցազն:
 254. Ալիշանի օր. (Այրարատ, 525) ունի՝ «Ը-
 առ զգլուխ...»
 256. Ալիշանի օր. ունի այս տողը նախընթացից
 քառա՛:
 259. «Էրէմնութիւն՝ այսպէս սմբ օր.

286. Ալիշանի օր. «զաւրք նորին» որ
 դաւաղ ընթերցուած է:
 292. Անասախ թաթար. բառ = անիրաւ. Ալի-
 շանի օր. «անասաղ ազգ», որ անյաջող սրբազոր
 թիւն է:

500 Այլ աւելի քան զհասին
 Հինգ բիւր՝ որ է յիսուն հազար
 Էր սորա գաւրքն ընդ նոյն համար.
 Զի երեսուն էր Թամուրին
 Ի այլ աւելի քան զզհասին

505 Բայց ոչ ունէր սա չարութիւն.
 Այլ բարեակր հանգարտութիւն:
 Յորմէ սարսփան տղղ թուրքմանին
 Վասն իւր չարեացքն զոր ունին.
 Զի անողորմ էր շանիրաւ:

510 Անմիրաթ է՝ անշաղաւթ:
 Անդատաստան և անհաւատ
 Պիղծ, չարագործ իսկ և տրմարդ,
 Անպատկառ և անամութ,
 Մեզաց աման, չարեաց անաւթ:

515 Փառք Աստուծոյ զոր ինչ արար
 Ընդ թուրքմանին չարեացն յարմար.
 Բանդի խրբան նախ և փախեան
 Եւ յետ դարձան կոտորեցան.
 Ըստ արժանեացն ի ձեռս անկան

520 Շահ-ըֆուտին և մասնեցան:
 Շատք ի սրտոյ նոցա մեռան
 Ի այլքն փախեան և զերեցան,
 Կողոպտեցան և զերեցան,
 Զիոց կոխան սատակեցան:

525 Խաղք խայտառակ թարանեցան,
 Ի սար է՝ ի ձոր փախըտաւան:
 Ընդ որ փախեան՝ հալածեցան
 Ի ինքեանք միմեանց զահլիճ դարձան,
 Անթիւ ըրզակ էր զոր տարան:

530 Աղէկ ձիան և շատ ուզան:
 Կին և արդոյքն ի թիւ չանկան
 Զոր զերեցան և կոխեցան:
 Բայց ողորմած և խըղձական
 Սա սիրա ունէր Շահ-ըֆուտին այն.

535 Ասախ արար խուքմ՝ և հրաման
 Ոչ կորուսել զամենեանս,
 Այլ թոյլ ետուր որ ջրբուեցան,
 Ի աւար երկիր վրտարեցան:

Եւ Շահ-ըֆուտին այն մեծ սուրբան
 540 Գրնաց դարձաւ ի յորասան,
 Գրնաց յաթոռն իւր բընական,
 Ի Սամըրղանդ հայրենական,
 Զթախթըն թողեալ ըզ շահաստան՝
 Անակր Թաւրեզ քաղաքն զայն:

545 Ազա որդիք Ուսուֆ Բէկին
 Եկեալ թախթին այն տիրեցին.
 Բայց ինքեանք ոչ բարեշնչին,
 Այլ մինը զմուսըն փախուցին:
 Իսկ անիճեալն ամենեկն

550 Կրբեւ որդի Միւր Ուսուֆին՝
 ԸՍգանդիարն անաւթ չարին,
 Լիրբ անզամ յիմար հողին,
 Էր վնասակար և աւերող
 Շատ բարեկի շէն զաւանին —

555 ԶԱրճէշ և զԱրճիէ աւերեց
 ԶԲասեն և զԱնիկըն քահեց,
 ԶԿարնոյ քաղաքն զԱզըրուսմ
 Բան զամենայն խիստ աւերեց:
 Իսկ Իսքանդար աւագ որդին

560 Ղարայ Ուսուֆ ըսխաղուղին —
 Սա ի Թաւրեզ տիրեաց թախթին
 Ի ասախ արար շատ բարութիւն:
 Բայց մեզ աւար ած և խաւար
 Եւ չարութիւն գառն և գըժար:

565 Խեճէլ արար շատ բաղմութիւն
 Ի կէն ի վերայ Խրաթայ բերդին:
 Բերդին վնասել ոչ կարացին,
 Այլ գբաղաքըն այրեցին,
 Ի յԱդուանք արշաւեցին

570 Եւ չար զազայ անդ արարին,
 Ըզբերդն առին կոտորեցին,
 Շատ քրիստոնեայք անդէն սպանին,
 Բան զերկերիւրն այլ աւելի,
 Զոր անդ ի սուրբն քարշեցին

575 Թող զորս ի ծովըն խեղդեցան,
 Եւ քարավեժ եղեալ կորեան:
 Ո՛հ, զեղեցիկ կերպ ու սուրաթ
 Այն մանկակեղացն որ կորուսան.
 Լու հարկեւոր տանուաիրայք:

507. „Սարսփան“ — այսպէս մեր օր. թերեւ՝ ս ս ք-
 ս ն ա ն:
 510. Երևու արար բառեր հայ առ քաջասպանութիւն
 դրանց առաջինը նշանակում է անագորոյն, անզոյթ, եւ
 երկրորդը՝ անսիրտ, անխղճ:
 517. „Խորան“ — այսպէս մեր օր. արդեօք՝ խր ան ան:
 529. „Ըրզակ“ — սար:
 535. „Ասախ“ կամ իսասխ Թախար բառ — օրէնք,
 իրաւունք: — խուքմ՝ յ պատուէր:

551. Թ. Մեծոփեցին (էջ 79...)՝ փոխանակ „Սպան-
 դիարի“ միշտ Ա ս ա զ ա զ ա ն է կոչում Ուսուֆի կրտսեր
 որդուն:
 565. „Նոծեւ“ նոյն է՝ հոծեւ հոծեալ, հոծեալ գօրք:
 Ա լ Է Է՝ օր „հոծեւ“:
 569. „Եղուսնք“՝ քերդը պէտք է եղած լինի Խալիֆ
 ժամերը՝ ի նրեւ սորա եւ ժողակ գիւղի մէջեւ իսկ Ադր-
 վիտ գաւառի Աղայ կամ Աղու գիւղը, որ յիշում է Թ Մե-
 ծոփեցին (էջ 92), կարծեմ որ տարբեր է սորանից:

580 Համեստ է՝ աղւոր տանտիկընայք՝
 Բարձրահասակ է՝ աղէկ տեսակ
 Գուն ու կերպով ձոխ կրտորձակ:
 Այս ամենայն ի սուր անցան,
 Գերեզմանի չարժանացան:

585 Կանայք տղայաւքըն գերեցան
 Քան զՏինգ հարիւրն այլ աւերան.
 Զի ի միջ գեղջէ չէին,
 Այլ ի բաղում տեղաց էին.
 Ի Հիզանայ է՝ ի Բաղիշոյ:

590 Որք հասկաքաղ եկեալ էին.
 Ժրղաք է՝ Աղաղ ամենէին,
 Ծառք յԱղիթայ անգէն էին,
 Որք ի սուրն քարշեցան:
 Կանայք որդւովքն գերեցան:

595 Այս ամենայնի պատճառ է այն
 Ծամբը լղին ամիրայի,
 Զար սատանին արբանեկի
 Եւ ի նեռին կարապետի,
 Որ նա արար հպարտութիւն:

400 Զհնազանդեցաւ իւքանդարին:
 Ծառք որ սպան է՝ անթաղ մնացին,
 Ոչ հաց հոգւոյ՝ ոչ գրամ թողին.
 Եւ որք գերի վարեալ գնացին,
 Յաւտար երկիր վրտարեցին:

450 Ի յայլազգին խառնակեցան,
 Ըզարութիւն նոցա ուսան:
 Աւտարացան և յուսացան,
 Ըզհայրենիսն մոռացան,
 Պըղծեցան և զարշեցան:

410 Աղտեղացան և զպրացան,
 Ոչ ի կամաց, այլ յակամայ
 Հանդիպեցան այս դարք նոցա:
 Միթէ Աստուածն քաղցրանայ
 Եւ աղատ անտի զնսա:

415 Որք հանդիպիք այս երգակիս,
 Զիս յիշեցէք ըղիղկելիս —
 Զմրափած Կրկոյր յաթաղայն,
 Որ սպասաւոր կոչիմ բանիս:

Եւ սխալանայ շարադրիս —

420 Անմեղադիր լերուք անձինս,
 Որ գրէի ըզբան ողբիս
 Եւ կրակըճայր սիրտս ի փորիս.
 Ոչ հանդուրժեալ մըտաց խըղձիս,
 Զոր զըրեցի ևս ի քարախս:

425 Բանդի ի մէջ էաք շարիս,
 Որ եկն եհաս մեր աշխարհիս,
 Եւս առաւել մերում ազգիս,
 Այս տառապեալ Հայոց տահմիս՝
 Անուամբ միայն քրիստոնէիս

450 Գործոց դատարի ամբարըշտիս,
 Սուրբ աւրինաց հակառակիս,
 Բարխտեաց շարասիրիս,
 Եմք անդուրթք հեղզ ի բարիս
 Անապաշաւ խըղձամբիս:

455 Ժող և պղերոզ յամեն բարիս,
 Ի անկարեկից յայոց կարիս,
 Յիշոցնատու ոչինչ բանիս,
 Ի՛ երգըմնագանց ևս ի սնտիս,
 Բախիլ՝ յաշաղ յայոց բարիս

440 Եւ նախանձոտ առ ընկերիս,
 Ըխնախընդիր շարածըձիս
 Եւ բամբասող միշտ ըզբարիս:
 Վասն այտորիկ տաժանեկիս
 Եւ տառապեալ եմք յաշխարհիս,

445 Մեր խաւարած եկեղեցիս,
 Ազգս ցրուած յամեն տեղիս,
 Բայց դոհութիւն մարդասիրիս,
 Որ սպրեցաք ի յայս վշտիս,
 Զմեզ ոչ թողեալ ի նեղութիւն:

451 Այլ փոյթ եհան յանդորրութիւն:
 Տուք աւրհնութիւն Հաւրն անեղին
 Եւ միածնի Բանի Սորին,
 Այլ և Հոգւոյն իւր էակցին
 Փառք և պատիւ ի մէջ տացին:

455 Երրորդութեանն միակին
 Հայր և Որդի և Սուրբ Հոգին,
 Որ ետ ինձ կար արկար անձին
 Եւ գեղն ու զնուն հասոյց ի մին,
 Բամեալ զգանձերս որ ի միջին:

460 Են առաջին և նուն յետին

589. «Հիզան» որ եւ Եփզան:
 591. Այս գիւղերը մինչեւ այժմ կեցած են վանայ
 ծովի ափին Դասովանի եւ Երաթի մէջ: Հմնտ. Ն. Ս ա ր-
 գ ր Ե ս Ե ի Ծ ե ղ ա զ ք. Ի Փոքր եւ Ի Մեծ Հայս. էջ 275
 Մ ի ր ա խ ո թ Ե ա ն ի Ն կարագր. Ուղեոր. Ա. էջ 85—86:
 592. «Սըրիթայ» — այսպէս իմ օրինակում: քայլ
 Ս դ է թ կամ Ս դ ի թ գիւղ եւ ըզ կարողացայ գտնել Եփ-
 ղ ա թ ի շրջակայքում: Երգուց Մ ի եւ Ա ի շ ի թ թ ո թ ի ն ը ջ
 այստեղ եւ յԱղիթայ կամ յԱղիտայ կարգաւ ըջ. քրտի-
 սի (Աղիտ) գիւղ արպարեւ գոյութիւն ունի Երաթի մասերը
 և յատկապէս Ժողովի եւ Աղաղի մօտ: Հմնտ. Մ ի ր ա խ ո-
 ր Ե ա ն. Անտ. «Սըրիթայ» ունի եւ Ա ի թ շ. օր.: Վեոթրերեալ
 երեք գիւղերեք Թ. Մեծոփեցին միայն Ժողակն է յըլում:
 495. Ա ի թ շ ա ն ի օր. «Այս ամենայն ի պատճառէ
 Այս Ծամբըղին ամիրայէ»:
 596. «Ծամբըղին» — այսպէս իմ օրինակում կարդա-
 լու ըջ. Ե ա մ Բ շ Ե տ ի ն, որ Բաղիշու Ծամբատին ամիրայն
 էր: Թ. Մեծ. էջ 85:
 401. Ա ի թ շ ա ն օր. «Ետ որ ըսպան»...:
 402. Ա ի թ շ ա ն ի օր. ոչ գրամ հոգիս:

459. քախիւ — նախանձոտ, նախանձ: Ժ. Եփ.
 458—460. Եթէ այստեղ մի այլ փոխարեքական է-
 մաստ ըզ կա՝ օր. հեղինակի արժեան վերաբերմանը.
 Թերեւս «Յիշատակարանի» տողերի քանակութիւնն է ան-
 սարկում Երաթեցին Ե (3) եւ Ն 400) Թուանիշ տառերով:
 Նման թուարկութիւն առաջ է բերում մեր հեղինակը իւր
 մի այլ գրուածքում՝ Ս ա դ մ օ ս ի կանոնագրութեանը, գու-
 ղաների եւ տունների թիւը որոշելու առթիւ:
 «Զիս ի յէշէս հիմնարկեցին
 «Տարեալ ի հիմն աւարտեցին,
 «Այն խորանաւ զարդարեցին,
 «Այնտեւ և շորս գունն բացին...»:
 (Տես էջ 8 աշխատի «Յուցակը», էջ 65):»